Հավելված
ՀՀ կառավարության 2018 թվականի
նոյեմբերի 1-ի N 1222 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ ՀԱՇՎԵՑՈՒՑԱԿԱՅԻՆ ԶԵՆՔ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Դատավորին հաշվեցուցակային զենք, այդ թվում՝ փամփուշտներ, և պաշտպանության հատուկ միջոցներ տրամադրվում են դատավորի պաշտոնավարման ժամանակահատվածի համար ինքնապաշտպանության նպատակով:

2. Դատավորին պահելու և կրելու իրավունքով հաշվեցուցակային զենք և պաշտպանության հատուկ միջոցներ տրամադրվում են Հայաստանի Հանրապետության ոստիկանության (այսուհետ՝ ոստիկանություն) կողմից:

3. Դատավորներին տրամադրվող հաշվեցուցակային զենքի տեսակները, ձևը, մոդելը, փամփուշտների քանակը և պաշտպանության հատուկ միջոցների տեսակները սահմանում է ոստիկանությունը:

4. Դատավորին տրամադրվող հաշվեցուցակային զենքի հետ միասին տրվում են զենքը կրելու համար նախատեսված համապատասխան հարմարանքներ, ինչպես նաև՝ զենքի խնամքի համար նախատեսված պարագաներ:

5. Դատավորին հաշվեցուցակային զենք և պաշտպանության հատուկ միջոցներ տրամադրվում են դատավորի՝ Բարձրագույն դատական խորհրդին ուղղված դիմումի հիման վրա, որին կցվում է զենքի հետ անվտանգ վարվելու կանոնների, ինչպես նաև զենքի և պաշտպանության հատուկ միջոցների գործադրման ուսուցում ստացած լինելու վերաբերյալ տեղեկանք:

6. Դատավորների՝ զենքի հետ անվտանգ վարվելու կանոնների, ինչպես նաև զենքի և պաշտպանության հատուկ միջոցների գործադրման ուսուցումը կազմակերպում է ոստիկանությունը:

7. Դատական դեպարտամենտը դատավորի՝ հաշվեցուցակային զենք և պաշտպանության հատուկ միջոցներ տրամադրելու դիմումը, նրան նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրի պատճենը և զենքի հետ անվտանգ վարվելու կանոնների, ինչպես նաև զենքի և պաշտպանության հատուկ միջոցների գործադրման ուսուցում ստացած լինելու վերաբերյալ տեղեկանքը դատավորի դիմումը և կից փաստաթղթերն ստանալու օրվանից մեկշաբաթյա ժամկետում փոխանցում է ոստիկանություն:

8. Ոստիկանությունը դիմումը և կից փաստաթղթերն ստանալու օրվանից մեկշաբաթյա ժամկետում դատավորին տրամադրում է հաշվեցուցակային զենք և պաշտպանության հատուկ միջոցներ՝ դրա մասին տեղեկացնելով Բարձրագույն դատական խորհրդին:

9. Հաշվեցուցակային զենքը և պաշտպանության հատուկ միջոցները դատավորը ստանում է անձամբ, որի վերաբերյալ կնքվում է հանձնման-ընդունման ակտ:

10. Հաշվեցուցակային զենքը և պաշտպանության հատուկ միջոցները գործադրելու, ինչպես նաև դրանք կորցնելու կամ դրանց փչանալու դեպքում դատավորն անհապաղ տեղեկացնում է ոստիկանությանը:

11. Դատավորի լիազորությունները դադարելու կամ դադարեցվելու դեպքում Դատական դեպարտամենտը դրա մասին 3-օրյա ժամկետում տեղեկացնում է ոստիկանությանը:

12. Դատավորի լիազորությունները դադարելու կամ դադարեցվելու դեպքում տրամադրված հաշվեցուցակային զենքը և պաշտպանության հատուկ միջոցները դատավորը մեկշաբաթյա ժամկետում հանձնման-ընդունման ակտով հանձնում է ոստիկանություն:

13. Պաշտոնավարման ընթացքում դատավորի՝ տրամադրված հաշվեցուցակային զենքից և պաշտպանության հատուկ միջոցներից հրաժարվելու ցանկության դեպքում դատա-

վորը դիմում է ներկայացնում Բարձրագույն դատական խորհուրդ: Դատական դեպարտամենտը դատավորի՝ հաշվեցուցակային զենք և պաշտպանության հատուկ միջոցներից հրաժարվելու դիմումը մեկշաբաթյա ժամկետում փոխանցում է ոստիկանություն: Ոստիկանությունն ապահովում է հաշվեցուցակային զենքի և պաշտպանության հատուկ միջոցների վերադարձը, որի վերաբերյալ կնքում է հանձնման-ընդունման ակտ և տեղեկացնում Բարձրագույն դատական խորհրդին:

14. Սույն որոշման 12-րդ կետում նախատեսված ժամկետում հաշվեցուցակային զենքը և պաշտպանության հատուկ միջոցները ոստիկանություն չհանձնվելու դեպքում դրանց վերադարձն ապահովում է ոստիկանությունը, որի վերաբերյալ կազմված արձանագրության մեկ օրինակը ոստիկանությունը փոխանցում է Բարձրագույն դատական խորհուրդ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ՓԱՇԻՆՅՅԱՆ